

## Նկարագրություն

- Օժտված բարձր ծածկողականությամբ
- Էկոլոգիապես մաքուր
- Առողջության համար անվտանգ
- Ջրակայուն
- Կայուն եղանակային փոփոխությունների և ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ

## Բաղադրություն

Բարձրորակ սոպոլիմերային դիպերսիա, պոլիմերային հավելանյութեր, պիգմենտներ:

## Նշանակություն

Նախատեսված է շինարարական արտաքին և ներքին մակերեսների (բետոն, գիպս, ծեփ, փայտ, պաստառ) և այլ ծածկույթների ներկման համար:

## Մակերեսի նախապատրաստում

Ներկվող մակերեսը պետք է լինի հարթ, ամուր, չոր, մաքուր, զերծ խոնավ և յուղային հետքերից:

## Օգտագործում

- Օգտագործելուց առաջ ներկը լավ խառնել:
- Անհրաժեշտության դեպքում կարելի է ավելացնել ջուր՝ ներկի զանգվածի 10%-ի չափով:
- Աշխատանքը կարելի է կատարել վրձնով, ներկագլանով և փոշեցրիվ գործիքով:
- Ներկման աշխատանքները կատարել  $+5^{\circ}\text{C}$ -ից ոչ ցածր ջերմաստիճանային պայմաններում:
- Աշխատանքից հետո գործիքները լվանալ ջրով:
- Օգտագործված տարաներն աղբահանել սահմանված կարգով:

Քսվող մակերեսի ջերմաստիճան	$+5^{\circ}\text{C}$ -ից $+30^{\circ}\text{C}$
Ծածկողականություն՝ մեկ շերտով (լաբորատոր պայմաններում): Ներկի ավելի ստույգ ծախսը կախված է օգտագործվող մակերեսից և նրա հարթության աստիճանից:	1 լ - 9 մ <sup>2</sup>
	5 լ - 45 մ <sup>2</sup>
	10 լ - 90 մ <sup>2</sup>
	15 լ - 135 մ <sup>2</sup>

## Փաթեթավորում

5լ, 10լ և 15լ պոլիպրոպիլենային տարաներ:

## Պահպանում

Պահել փակ վիճակում  $+5^{\circ}\text{C}$ -ից ոչ ցածր ջերմաստիճանային պայմաններում: Պահպանման ժամկետը՝ փաթեթավորման վրա նշված արտադրման օրվանից 24 ամիս:

## Ուշադրություն

- Այլ պայմաններում աշխատանքների իրականացան դեպքում վերոնշյալ ցուցիչները կարող են շեղվել:
- Արտադրողը պատասխանատվություն չի կրում աշխատանքների ոչ ճիշտ կատարման դեպքում: